

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարին) համար 12 ֆր.
արեկակ 7 "
վեցումսայ Արսասահմանի
համար արեկակ 15 ֆր.
վեցումսայ 8 "
Ավերիկայի համար
արեկակ 3 ֆր.
վեցումսայ 1.50 "

Երանցումսայ տղը և
նույնի երեսին համար
40 սանթիլ իսկ վերջին
երեսին համար 20 սան-
թիլ և, երեսին անկի
սանթիլներու համար
20 0/0 գեղը կըլլայ:

Վառնայի համար ձեռ
ֆե 40 սանթիլ և

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՊՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ և գրամ
դրեղ խմբագրության
հասցեին

Редакция на вѣстникъ
"Шаржумъ"
Варна

Redaction du journal
"Charjourn"
Varna (Bulgarie)

Պուշկարին) համար
ձեռ 15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար
ձեռ 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք և չեմ
սրուիք

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՐ Ե ԿԱՆԵԿՎ ԿԺԱՐԷ

Ս. ԳՍԲՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԷՆԷՆԵՐԱԸ.
ԽՆԻՈՐԸՆԱՆ ԱՍՏԻՍ ԳՈՂԱՔԻ ՎԻՃԱՆ.
ԿԱՂԱՔԱԿԱՆ ՏՈՒՍԵՐՈՒՆ

Տոմսակ գնել փոփոխութեանը կրնան
իրեն դիմել՝
Զար-Պորիս փողոց Վառնա

ՍԻԹԻՆԿՆԵՐԸ

— 3 —

Եւրոպացի հայաստաններու դի.
մուսը Ամերիկայի նախագահին
և այս վերջինը կողմէ ցոյց տըր-
ուած համակրութիւնը. առիթ
տուաւ որ պուրկարահայութիւնը
շարժի, ոգեւորուի, իրար անցնի,
ու ամէն տեղ, յաջորդաբար,
միթինկներ գումարուին, երախ-
տագիտական կամ աղաչական հե-
ռագիրներ պարնուին մեծ նա-
խագահին, որպէս զի ան նախա-
ձեռնարկ մը ըլլայ հայոց վիճա-
կը բարոքելու առաջարկի մը
յառաջիկայ Լահէյի համաժողո-
վին մէջ:

Առաջին անգամ չէ որ արտա
սահմանի հայութիւնը կը փու-
թայ իր պարտականութիւնը կա
տարել, միահամուռ բարձրաց-
նելով իր ձայնը ինպատարտա-
պող եղբայրակիցներուն. վեր-
ջին տարեկան տարիներու մէջ
մէկ քանի անգամ ներկայացան
այդ տեսակ առիթներ, որոնք,
դժբաղդաբար, արձագանգ չի
գտան ու բոլորովին անհետե-
ւանք մնացին:

Թէ այս անգամ ալ բարձրա-
ցող աղաղակները, գացող եր
կարապատու հեռագիրները
նոյնքան անհետեւանք պիտի
մնան, որքան իրենց նախորդ-
ները, ատոր բնաւ տարակոյս չի-
կայ. Հայկական խնդրին առջեւ
այս անգամ ալ Լահէյի գոնորր
փակ պիտի մնան. Նախագահ
Ռուզվէլթ, իբր անկեղծ մար-
դաւեր, իրեն ինկած բաժինը
պիտի գործագրէ, բայց եւրո-
պայի տիրահաշակ Բոնոնը

նորէն պիտի կաշկանդին մեծ
նախագահին ջանքը. ինչ-
պէս երբեմն կաշկանդեց Անգ-
լիոյ ամբողջ բարեացակամու
թիւնը. Եթէ, միեւնոյն ժամա-
նակ, հայ ազգը կարողանար ա-
պտամբական ճնշող զօրութիւն
մը պայթեցնել և հայկական գա-
ւառները միահամուռ բռնկցնել,
բնաւ տարակոյս չիկայ, այն ա-
տեն, յաջող արգիւնքի մը հաւա-
նականութեան, Դժբախտաբար
այս պարագան առ այժմ երազ
մըն է:

Այսօր, միթինկներու գլուխ
կեցող անձերը, ինչ կարգի դի
տուներով ալ ճամբայ ելած ըլ-
լան—գիտումներ որոնք անշուշտ
չեն պակտիր—իրենք ալ կը խոս-
տովանին թէ անպատճառ բան
մը սպասելու յուսով չէ որ ճամ-
բայ կելլեն: Անոնք սամնէն ա-
ւելի համոզուած են մանաւանդ
որ մեր յոյսը միտակ մեր համա-
րած ուժին մէջ կրնայ կեդրո-
նանալ և մեր իսկ կատարած ար-
գիւնաւոր ու խելացի զոհողու-
թիւններու ստիպմամբ միայն ի-
րագործուի: Արիչ կերպ մտա-
ծելը արգէն ինքզինքը խաբել
պիտի ըլլար:

Այս իսկ պատճառաւ, պատաս-
խանատուութեան աւելի ահեղ
բաժին մը կը ծանրանայ իրենց
վրայ, երբ բաւականանան այլ-
եւս հինցած սօրօրներով հա-
սարակութիւնը քնացնելու ջանալ
միայն, երբ իրենց ճիգը ամփո-
փեն Ռուզվէլթի հեռագիր մը
կամ հանրագրութիւն մը խմբագ-
րելու մէջ, ու մանաւանդ երբ
մոռնան իրենց մեծագոյն պար-
տականութիւնը. որ է հետզհե-
տէ ճնշող ուժ մը գոյացնել ա-
ռանց յիմարութեանց մէջ մըտ-
նելու, բառնալով այն թերու-
թիւնները որոնք մինչեւ այսօր
այդ ուժին գոյանալուն գիտակ-
ցաբար կամ անգիտակցօրէն ար-
գելք եղան: Անհրաժեշտ է
որ, այն եռանդը որ ցոյց
կուտան այս միթինկներու կազ-
մակերպութեան առթիւ և ան-
կեղծութիւնը որով կը խոստու-

վանին անոր արգիւնքները, ե-
րեւան գայ մանաւանդ այն բա-
րեփոխութեանց համար յեղա-
փոխական կազմակերպութեանց
մէջ, զորս իրենք իսկ պահան-
ջած են դեռ արտասահման ոտք
չի կոխած, զգալով անոնց ան-
խուսափելի անհրաժեշտութիւնը
ու անոնց բացակայութեան պատ-
ճառած վնասները:

Երկուութիւնը որ կը նշմարեն
իրազեկ անձինք անոնց քայլե-
րուն մէջ, որոնք հասարակաց
կարծիքը գիտակցաբար մոլո-
րեցնելու կամ քնացնելու բը-
նոյթն ունին, որոնք նոյն իսկ
իրենց ներքին համոզումներուն
կը հակասեն, որոնք ժխտումն
են այն անցեալին որով կը փա-
ռաւորուին իրենք, այն բողբո-
ններուն, այն ըմբոստութեան,
այն բուռն պահանջներուն ո-
րոնք խզումի ալ պիտի յանգէին
գուցէ. այս ամէնը բաղդատելով
իրենց ներկայ աւորոշ, անգոյն
ճիգերուն առերեւոյթ վտանգը
փրկելու ի հեճուկս իրական վը-
տանդին, մեր առջեւ տարակոյ-
սի մեծ գուռ մը կը բանան. ու
մենք զարմանքով կը հարցնինք
թէ ո՞րն է երկուութեան անձ
նաւորումին տակ ներկայացող
ճշմօրիտ էակը, ա՞յն որ բուն
տառապանքին մէջ բողբոնով
կարհամարհէր ամէն միտպետա-
կան ու անիմաստ վերին միջա-
մըտութիւններ, որ կը պնդէր
կուրի ասպարէզը կուռողներուն
միայն վերապահել. թէ այն՝
որ այսօր, երկրէն դուրս, ամէն
բան վարդագոյն կը ձգտի ներ-
կայացնել, և այնպէս ցուցնել որ
աշխարհներու լուազոյնին մէջ
գործերը ամենալուազոյն ըն-
թացք մը առած են: Այսօրուան
թիւով մեր հրատարակած «Ինչ-
նակցական քրօնիկը» տխուր ի-
րականութիւնը ամբողջովին կը
մերկացնէ:


ԴԱՇՆԱԿՅԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Արեւմտեան Բիւրօն կազմաւորուած

Ժնէվից Պարիզ հասած տեղե-
կութիւնները այնքան էլ վար-
դագոյն չեն ներկայացնում մեր
Արեւմտեան Բիւրօնի կացութիւ-
նը: Արեւմտեան բիւրօն վերջին
ընդհանուր ժողովից անմիջապէս
յետոյ՝ արգէն կազմաւորվ Վի-
ճակ ունէր, որովհետեւ երկու
պատասխանատու մարմինները չը
կարողացան իրենց ներկայացու-
ցիչ և մշտական անդամները ու-
նենալ բիւրօնի կազմի մէջ: Այդ-
պիսով բիւրօն փոխանակ 5 ան-
դամներ ունենալու՝ շարունակեց
իր գոյութիւնը մի տարի երկու
անգամով. երկրորդ տարին ե-
րեք անգամով:

Այժմ ամիսներէ ի վեր բիւրօն
արգէն մի անգամից է կազմը-
ված. որովհետեւ միւս երկու
անդամներն էլ հեռացել են:
Ուրեմն մի անգամից կազմված
Արեւմ. բիւրօն այսօր թագաւո-
րուած է ամբողջ արտասահմանում,
և իր շրջանում գտնվող երկրի
դաշնակցականների վրա... Դժ-
բախտաբար թէ բարեբաղդաբար
արեւմտեան բիւրօնի շրջանում
գտնվող երկու պատասխանատու
մարմինները գոյութիւն չունին.
գրանցից մէկը երբէք չէ ունե-
ցել գոյութիւն, իսկ միւսը մի
տարուց աւել է որ գոյութիւն
չունի... Արեւմտեան բիւրօնի շը-
ջանում երկրորդ ոչ մի ուժ չունի,
իսկ Արեւելեան բիւրօնի շըջանը
որ ներկայացնում է Վասպուրա-
կան, Սասուն և Մուշ նոյնպէս
ուժասպառ և անկազմակերպ վի-
ճակի մէջ են գտնվում: Սակայն
արեւելեան բիւրօն գործ ունի
այժմս. որովհետեւ կան կովկա-
սի հայ—թաթարական ընդհա-
րուները ու բիւրօն և դաշնակ-
ցական ընկերները պարտաւոր-
վեցին ինքնապաշտպանութեան
գործին մէջ յառաջ վազող ժողո-
վրդի ետեւից քաջ գալով գնալ:
Իրականութիւնը այն է որ այսօր

ՇԱՅՄ



Դաշնակցութիւնը երկրում, այսինքն ծածկաստանում, որի մէջ գործելու համար և ստեղծված է, ոչ մի ուժ չէ ներկայացնում հակառակ տրված ահագին զոհերի և միայն հովկասում է երեւում այն էլ շնորհիւ ժողովրդի բարոյական բռնադատման. և եթէ կովկասեան դէպքերը, կովկասեան հայութեան յեղափոխական աւելի ուժով տրամադրութիւնը չը լինէր, այսօր մեր կազմակերպութիւնը պէտք է ներկայացնէր իր ամբողջ նիւթական և ֆիզիքական հարստութիւնը վատնած մի կազմակերպութիւն, նա այնպէս էլ պէտք է ներկայանայ հենց որ կովկասը ընդունի որոշ չափով խաղաղ վիճակը և ժողովուրդը անձնատուր լինի իր աւուրեայ հոգսերին, կորցրածը ետ բերելու ճիգերին:

Այս այսպէս թէ այնպէս իրողութիւն է որ Դաշնակցութեան արեւելեան բերքով շրջանը գործունէութեան մէջ է, թէեւ ոչ ծածկաստանի վճարաբեմամբ, իսկ արեւմտեան բերքն իր ամբողջ շրջանով խաղաղիկ մի մարզի ձեռքում, որ իրեն օգնական ունի «Դրօշակ» մի խմբագիրը և մի քատուղար կամ հաշտագահ որ երկիրը երկիրը պոռչկտալուց և ընդդիմադիր լինելուց յետոյ գոհացաւ ռոճիկով ժնկվում տեղաւորվելով... ու այսօր աղալի դեր է կատարում և երկիր մտնել մոռացած է...

Հա, ժնկվում է տեղաւորված և Բուլղարիայում յայտնի տետո ծերուկ Անտոնը, զբաղվելով գրաշարութեամբ ազատվելով անտանելի խեղճ կացութիւնից... Դաշնակցական ազաները իրենց հլու հպատակներին վարձատրել զիտեն, որպիսով և ըստեղծվում է փառաբանողների բանակը...

Ժնկվում գտնվում են Ամերիկայից, Պարսկաստանից և երկրից եկած գործիչներ. դրան-

ցից ոմանք հանգստանում են, ոմանք կազդուրվում, Ամերիկայից եկողը, որ փոխել է Վաւաւեանից, ինչպէս ասում են բաւական խոշոր ընդհարումներից յետոյ, Դրօշակի խմբագրատուն տոք չէ կոխում... Վաւաւեանը Ամերիկայում մնացել է մենակ. նրա աջ բազուկն է ներկայանում Վաւաւեանի ներքին Պոլսոյ մի խանում գոնապան և ապա Վաւաւայում ճաշարան պահող Վահագը, որ այժմ ամերիկեան մի շրջանի ներայացուցիչ է և Ամերիկայում Վաւաւեան յեղափոխական դպրոցի գլխաւոր քարոզիչ ուսուցիչներից մէկը... Վայ քեզ հայ յեղափոխական տարր որ քո քարոզիչները և ուսուցիչները Վահագները պէտք է լինեն... Բայց ի՞նչու զարմանաք, ի՞նչ է ներկայացնում Բուլղարիան, Եգիպտոս, Ռուսիան, երկիրը...

Կարճը, հակառակ կովկասեան Դաշնակցական մարմինների եւաւանդուն գործունէութեան, որոնց հոգացողութեան միակ աւարկան կովկասն է, որը և շատ բնական է, Դաշնակցութիւնը այժմ ներկայացնում է մի կազմաւոր յեղափոխական մարմին տանկահայ դատի վերաբեմամբ:

Գոյութիւն չունին երկրի բոլոր պատասխանատու մարմինները, առանց բացառութեան. երկրում ամենախեղճ ինքնապաշտպանութեան համար ուժ չըկայ կազմակերպված: Արեւմտեան բերքում միայն մի անդամ է մնացել. Եգիպտոսի չըրջանը է մնացել. Եգիպտոսի չըրջանը ոչինչ չէ ներկայացնում. Բալկանեան շրջանը խարխուլ կամ բերքոյից կամ է. կոմիտէից կտրված վիճակում է. Ամերիկան վերածվում է քառսի և Վաւաւեանի աճպարարութիւնները այլ եւս չեն կարողանում հմայել և սանձահայել գիտակից և դրական պահանջներ ընդ ընկերներին:

Դրութիւնը այսպէս լինելուց յետոյ Դաշնակցութեան Ընդհանուր ժողովի գումարման շտապումը հրամայողական է և Դաշնակցական գիտակից ընկերները պարտաւոր են ուժ որ հարկն է շտապեցնել տալ... ժողով գումարելու:

ՎԱՐՂՕ

ՍԼԱՑԻԿ ՆՕԹԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԷՆ

Եւրոպական մամուլին օրէ օր հասած հեռագրները ուրիշ բանի չեն յանգիր՝ բայց եթէ այն՝ որ Ռուսաստանի ժողովրդներուն ներկայ վիճակը անտանելի էն ալ աստիճան մը անդին է:

Ի՞նչ եղան հոկտեմբերի մանիֆէստին խոշոր խոստումները. ի՞նչ եղան Վիթթէի «ազատամիտ» յայտարարութիւնները, ի՞նչ եղան Ռուսաստանի մտաւորտ անդորրութիւնը պատգամող աւետիսները:

Վերջին օրերս եկած հեռագիր մը յստակօրէն կը յայտնէ Վիթթէի անվերապահ համաձայնութիւնը Տուրնոօի հետ՝ որովհետեւ այս վերջինին կուսակցութիւնը սակաւ հզօրանալով արբունական շրջիւրի մէջ՝ վախկուտայ իր մօտակայ անկումին: Եւ անա երէկուան «ազատամիտ» ժողովրդասէր և յամալագէմ Վիթթէն, այսօր կը հանդիսանայ ամենէն գեղձու, ամենէն ստոր ու յետադէմ տէրունական անձնատրութիւնը, աւելի վատ քան է՛ն մոլի արիւնարբու յեւաղիմականը:

Յարի խորհրդատուները սխալած չլին իրենց հայրենիքուն մէջ՝ տալով տէրութեան զեկը Վիթթէի նման աղուէսի մը ձեռքը, որ, մէկ կողմէն ներկայացնելով ինքզինքը «ազատամիտ» մը, պիտի է՛ն հզօր սիւնն ու ազդակը հանդիսանար միտակցութեան Եւ այդպէս ալ եղաւ:

Անցեալ զեկտեմբերին խոստացուած Տուրնոյի գումարումը՝ որպէս արգասիք «ազատամիտ» Վիթթէի բարեխօսութեան, այս պահուս յետաձգուած է մինչեւ յաջորդ աշնան եւ եթէ այդ որոշեալ շրջանին ալ իրականացուի, արդէն ութերորդ մեծագոյն հրաշքը կարելի է համարել:

Որպէս թէ ներքուստ «ամենադորմածարար» խօսքի մամուլի գումարումներու ազատութիւններ էր «ըընորհած»: Բեթեքապուրի մէջ օր շանցերի որ տանեակ թերթեր չը խափանուին ու հարիւրաւոր աշխուս գործներ ու խօսողներ բանտերը չը յեցուին: Իրապէս, բանտերը թրուուաններու թիւը խելքէ վեր է. անհաւատալի:

Համաձայն հոկտ. 17/30 ի մանիֆէստին, աստուցմէ իւրաքանչիւրը հարկ է դատարանական քննութեան անցնել՝ նախ քան վերջնական պատժոյ մը ենթարկուիլը:

Բայց զարմանալին հոն է որ բաւականաչափ դատաւոր չկայ այդ հրակայ բանակը դատելու: Դատական միւնիստրութիւնը փոփոք յայտնած էր անցեալները բոլոր տիպիւսաւոր կամ առանց արթնութի իրաւաբանութեան ուսանողները օգուելեան կանչել՝ այս անուրի գործը յառաջ տանելու համար սակայն, զարմանալին այնտեղ է որ այդ կոչին արձագանգ տուած են հի՛ն գ կոչի միայն մինչգեւ միւս կողմանէ բանտարկեալները կը պահանջեն անմիջական դատաւարութիւն և կազառնան՝ հակառակ պարագային՝ զրկել ինքզինքնին ամէն տեսակ սնունդէ և դնել կառավարութիւնը ծանր պատասխանատուութեան ներքեւ:

Սպանութիւններ, ուրբաձգութիւններ, ընդհարումներ առօրեայ սովորական գէպքեր են դարձած ամենուրեք:

Կովկասը իր մշտական արեւաթաւալ գրութեան մէջ է. նոյնն է Բօլսոփա, Ֆինլանտա, Վրաստան, մէկ խօսքով, բովանդակ լայնատարած Ռուսաստանին մէկ ծայրէն միւսը:

Ժնկէրալ Բաւլպար, վերջերս Իրեւան հանած է յայտարարութիւն մը՝ որով կը հոչակէ թէ բոլոր անոնք՝ որ օու է պաշտօնեայի վրայ ոււմը կամ հրացան կը պարպեն, և կամ համանեան յանցանք մը կը գործեն, պիտի անպայման դատաւարտուին ծանր պատիժներու, մինչեւ իսկ մահուան, առանց հարցաքննութեան կամ դատի ենթարկուելու, թէեւ, հոկտ. 17/30 ի «Հապէագ քօրքօզ» օրէնքը կարգիլէ այդպիսի քայլ: Վերոյիշեալ յայտարարութիւնը գործադրելի է Օսէսայի և Խէրսոնի կառավարութեան մէջ, պարունակելով Պեսարապիա, Եղադրինօսլավ, ինչպէս և Խրիմ ու Սէվաստոպօլ:

ԷՏԿԵՐ ՈՒՈԼՍ.

ԿԱՐՄԻՐ ԷՋԵՐ ՑԱՐԻՉՄԷՆ (')

ՊԵՏՐՈՍԻ ՆԱԽԱՓՈՐՁԵՐԸ

Օքտօբրի համալսարանը շնորհեց Պետրոս Ա. ի Վ. Ք. Օ. (Վարդապետ Բաղաբալկան Օրինաց) աստիճանը: Թուսիս մը, որ զգացած չէր կասկարմիր երկաթները, ոչ ալ նշմարած իր գիւրդէն-կազմուած շարչարասե-

(') Այս ընդարձակ ուսումնասիրութիւնը, որ երեցաւ վերջերս պարբերաբար Լօնտօնի կիսապաշտօնական — այժմ անպաշտօն — «Տէլի Մէյն» օրաթերթին մէջ, որպէս չահեկան կը տոր մը, կը թարգմանենք ամբողջովին:

նեկի տեսիլը, մկրտեց գայն «Մեծ», ու երկրորդական պատմիչներ ուսուցին աշխարհի երիտասարդութեան թէ Պետրոս Մեծ հաճելի և վսեմ միտպետ մըն էր. թէ այնքան կը սիրէր իւր ժողովուրդը՝ որ եկաւ Տէգֆըրտ նաւաշինութիւն սորվելու: Իսկական Յարիզը սկսաւ ի վան Ահարկուէն, որ ժամանակակից էր Եգիպտէի մը ալ Ռուսիան կը թուականէ Պետրոսէն: Որովհետեւ Պետրոս արտագրեց Ռուսիան, և շատ չնչին նիւթէ մը, Ռուսիան ինքզինքէն դուրս քաշեց — կասկարմիր ակիչներով, Այրեց կտրտեց և ձուլեց Ռուսիան ձեւի մը տողեց գայն կրակով, արթնցուց քնոթով, տառապեցուց, կաղաքուց և դուրս բերաւ Ռուսիան Արեւելեան քարքարոսութեանէն զէպի Արեւմտեան կեղծիքի քարքարոսութիւնը:

Մեծն Պետրոս մեծ զահիճ մըն էր,

յայրատ, վաւաչ ջղային մը, ցոփ, գծնդակ, կոպիտ անձ մը, որ կը գիւնովնար ողբիլից ըմպելիներով, որ յարգանք չունէր ո՛չ ծերութեան, ո՛չ երիտասարդութեան, սեռի կամ սոց. գականի հանդէպ, կը մտրակէր կինը՝ կը շարչիկէր է՛ն զարհուրելի շարչարանքներով իր մէկ օրինաւոր որդին և ապա մեռցուց գայն այրելով և քնութի ենթարկելով: Միմիայն սէկ կին կը ճանաչէր ու կը զնահատէր զինքը ու է՛ն ալ զինուորի մը կինն էր, որ մարաջախտի մը շնորհիւ (որ խոհարար մէջ արհեստով), բարձրացաւ գահին ուր Պետրոսի մահէն վերջ իշխեց ինքնին որպէս կայսրուհի:

Պետրոս րրաւ Ռուսիան այն ինչ որ է այժմ՝ իր այրուելէն մինչեւ սիկառէթի ունակութիւնը: Պետրոս ստեղծեց այդ, շատատեց ինքնակալութիւն և յեղափոխութիւնը հը.

նարաւոր դարձուց: Որովհետեւ Պետրոս առաջին ոռուս անիշխանականն էր, մէկ անփոփոխ հանգանակով մը, զոր կը յատկացնէր ամէն վիճակի: Եթէ որ կայ, սխալ է. ի՞նչ որ չկայ՝ ճիշդ: Մեծ էր ան զիպուածով վաստնդի արարքները՝ որ արժանացուցին զինքը այդ կոչման, է՛ն պակաս յիմարականներն էին իր քմահաճոյքներուն: Հետաքրքրութիւնը թելադրեց իրեն զրկել Պէհրինկը՝ Պէհրինկ նեղուցը գտնելու: Թուսիս նաւատորմ չունէր — Պետրոս յօրինեց հատ մը, և ո՛չ ալ բանակ — Պետրոս ստեղծեց հատ մը: Եթէ Ռուսիա գեղջկականութիւն չունենար Պետրոս կը կազմէր մին. — սակայն գեղջկականութիւնը գոյութիւն ունէր, ուստի, Պետրոս հակառակ կողմէն գործելու համար գեղջուկ մը բարձրացուց գահին վրայ ու խոհարար մը ալ կողմը: Պետրոս մեծապէս այլոց

Այս հրէշային յղացումին գործադրման մէջ կենդանի օրինակը կը պատկերացնէ Լօնտօնեան նորագոյն ազատական օրաթերթը, «Ռիփաբլիք», որ սկսած հրատարակուիլ զեռ քանի մը շաբաթներ առաջ միայն և սահմանուած է ըլլալ ազատական կառավարութեան համար այն՝ ինչ գեր զորունի . թայմզը որպէս ներկայացուցիչ պահպանողականութեան :

Ահա թէ ինչպէս կը նկարագրէ զէպ մը իրեն յատուկ թղթակիցը.— «Յունվար 21 ին (Ը. Տ.) Յէլին քաղաքին մէջ 85 հօգի սպաննուեցան զօրավար Օրլովի հրամանով : Մութ ու սառնապատ զիշեր մըն էր : Քաղաքէն զուրս փոս, մը փորուած էր ցորեկին : Այս փոսին բերուեցան բանտարկեալները շղթայապրկուած, մեծամասնաբար ուռուցիչներ և քիչ թէ շատ զարգացած գիւղացիներ, որոնք հրամայուեցան ձնադրել ու ապա սպաննուեցան : Ինկան ատոնք փոսին մէջ և այնուհետեւ բերուեցան ուրիշներ՝ որ հրացանի բռնուեցան միեւնոյն ձեւով : Ատոնցմէ շատեր լոկ վիրաւորուած էին և տակաւին կենդանի : Արեւմտեան փոսը լե. ցուցած պահուն կը հոնգային անոնք և կաղալակէին՝ երբ հողը կը նետուէր վրանին :

Սոյ ըրուեցին զօրավար Օրլով, կուրին մէջ, սպաննուեց և աղնուականներու հետ նստած՝ շամբանիս կը պարպէր . Երբ պաշտօնեան, որուն յանձնուած է վերոյիշեալ արարքին գործադրումը բերաւ տեղեկագիրը, «Ձերք մեծապատուութիւն, բոլորն ալ սպանուած են,» գլխաւոր-մարգասպանը որ Մանչեսթրիսէն ամբողջով ետ էր զրկուած, պատասխանեց.— «Ընտրե՛ր մարդ, Ս. Ֆէորգայ ննչին արժանի ես :

Այս պատկերը ինքնին կը պարզէ արդէն բովանդակ ահոյիտութիւնը միայնական ոչ ժիւղին :

Ինչ որ ցաւալի է սակայն և որ շարք մը բուսամուկ կայտակար մամուլին առիթ կուտայ աներես ու լիրբ յայտարարութեանց, այդ ալ խուլիքաններու բանակներն են որ, երբեմն, քաջալիքուած կառավարութեան իրենց արտօնած շնորհներէն ի հաշիւ անոր կը գործեն, իսկ երբեմն ալ, նկատելով յեղափոխականներու պատկառելի գիրքը և անոնց ազգած երկիւղը զանազան ունեւոր զասակարգերու վրայ, անոնց անունով կը յարձակին զխաւոր պան-

քաներու կամ հաստատութեանց վերայ, մերթ մինչեւ իսկ կառավարական գահ ձարանին, ու կենթարկեն զայն բացարձակ թալանի և աւարտութեան : Ասոնք կը ներկայացնէ կառավարի մամուլը որպէս յեղափոխական գործերու նմուշներ, բայց, տարակոյտ չկայ որ զիտակից յեղափոխականը այդպիսի վարմունքի չը զիմեր երբէք՝ մինչեւ չը հասնի ծայրայեղ կէտին, ու այդ կէտին հասած չէ ան տակաւին :

Մ. Յոլակ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՂԵՌ ԱԿԱՆ ԱՐԱՐԻԻՆ
ՀԵՂԻՆԱԿԵՐՈՒՆ
ԸՆԴՀ. ԴԱՏԱՍԱԶԻՆ ՃՍՈՒՇ
(«Մանզումէի-էֆֆեարուն քաղուած») (Շար. Անխ. թիւիւն)

Ահաւաստիկ իւրաքանչիւրին եղեւնագործութեան մէջ ունեցած աստիճանը.—

Օր. Ռուպինա Ֆայն, Լիրա Ռիրս կառուպան ձորք Բէգրի վարչամով և ձիադարման Երուանց Յրանկիւտան անձամբ պայթուցիկ նիւթերը կառքին մէջ դնելով Սէլամըքի արարողութեան վայրը մտցուցած, պայթեցուցած և անոր բուն ազդեցութիւնը ծանօթ թուով մարդոց մահուան և վիրաւորութեան պատճառ եղած են :

Սիւլիո Ռիչի. (այսինքն վահան), Քարլ Եուվանովիչ Աչոտ (այսինքն կարապետ), Թրասա Եուվանովիչ Թորգոմ (այսինքն խաչիկի որդի Արտաչ) և Սարգիս Ղարիպետի զուակ կառուպան Մկրտիչ և ս այս անիմապարտ նպատակը յաջողցնելու օժանդակած և այդ առթիւ պէտք եղած միջոցները հայթայթած և պատրաստութիւնները ամբողջացուցած են : Տիկին Սօֆի Ռիրս, Տիկին Աննա Նէլլէնա Ժօրիս և Տիկին Աչոտի և ս այս յեղափոխական մասնաճիւղին մասնակցելով անոնց բոլոր խռովարարական գործառնութեանց օժանդակած և անոնց կատարելագործութեան նպատակով են :

Իսկ Պէլիթիցի ամբաստանալ ժողով արդէն անիշխանական իրն է և իր երկրին մէջ ալ այնպէս ճանչը-

ցուած ըլլալով, իր գաղափարին և կոչումին բերմամբ այդ եպիսկոպոսաներուն եղեռնական ու վայրագ ընթացքին հակամէտ գտնուած, և զայն կատարելապէս յաջողցնելու համար զանոնք իր սուրը ընդունած է Սսկէ զատ, իր և իր կնոջ անունները իբրեւ հասցէ գործածելով անոնց անիծապալալ թղթակցութեանց միջնորդ եղած է անոնց բոլոր գումարումներուն և խորհրդակցութեանց մասնակցելով իր կարծիքներն ալ մեծ դեր և կշիռ ունեցած են տրուած որոշումներուն, ինչպէս նաեւ այդ որոշումներուն գործադրութեան ժամանակը որոշելու խընդրին մէջ : Ինք էր որ մէլին ի գկոչուած պայթուցիկ նիւթը իր սուրը ընդունած և երկար ատեն պանած էր նոյն եղեռնական նպատակով, և վերջապէս ինք էր որ եղեռնական զէպքին գիշերը վերոյիշեալ անձերուն հետ մէկտեղ գտնուելով, տեղեկութիւններ հաղորդած, ազդարարութիւններ ուղղած, և կատարուած պատրաստութեանց յաջողակէս ի գրուիս ելլելուն համար քաջալերած է զանոնք : Վերջապէս՝ հոս գործել յանդգնած եպիսկոպոսարքներէն բացայայտ կերպով հակացուած է թէ Ժօրիս Պոլոյս յեղափոխական մասնաճիւղին նախագահութեանը պաշտօնը ստանձնած էր պարզապէս, ինչ որ չը հակացուի գործուած արարքներուն կատարման եղանակէն, ինչպէս նաեւ եղեռնական զէպքէն երկու օր վերջը քօմիդէին կեդրոնին հետ թղթակցելէն : հետեւաբար ան տարակուսելի կերպով կը ստուգուի թէ յիշեալը նոյն եղեռնական արարքներուն մէջ ամէնէն կարեւոր դեր կատարող խուլարարներու պետիէն և անոր գործադրութեան ազդու մէկ միջոցը եղած է :

Միս արաստանեալներն ալ նոյն անիծապարտ նպատակը ի գործ դնելու համար պոմպա, տինամիթ և ուրիշ ահոյի հրանիւթերու ու գործիքներ փոխադրած և պահած են, և քօմիթէին ազդեցութիւնը և ան զամբերուն թիւը աւելցնելու և գործառնութիւնները կանոնաւորելու համար զանազան եղանակներով մասնակցած և օժանդակած են և յեղափոխական նպատակներու իրագործման միջոցներուն հայթայթումը իրենց համար սկզբունք և պարտականութիւն նկատած են : Ասոնց բոլորը յանդգնած են մանրամասնօրէն

պատմուած մեծ ոճիրները գործելու, կամ անոնց գործադրութեան մասնակցելու : Ինչ որ նիւթուպէս կը հաստատուի իրենց խոստովանութիւններով և մանրամասն յայտարարութիւններով, պաշտօնական թուղթերով և թղթակցութիւններով, բազմաթիւ վկայութիւններով Պանքայէն հանուած արձանագրութիւններով, իրենց ձեռք բերած պայթուցիկ և քանդիչ նիւթերու և գործիքներուն զուրս հանուելով, կատարելապէս բերուեցան վրայ կատարուած գիտական քննութեանց տեղեկագրերով և զեռ ուրիշ զրական ապացոյցներով :

Պատճառան իրաւանց համեմատ բացայայտ է ատոնց գործած ոճիրներուն և զանազան եպիսկոպոսարքներուն մէջ կապակցութիւն զատուելը, որովհետեւ ատոնք իրենց մէջ նախապէս տրուած որոշման վրայ համաձայնութիւն գոյացուցած են, և ամէնքն ալ միեւնոյն անիծապարտ նպատակը յաջողցնելու համար ձեռք ձեռքի տալով աշխատած և մէկուկ սկսած գործը միւսը ամբողջացուցած է : Այս զանազան արարքներուն բոլորն ալ միեւնոյն նպատակին և անոր եզրակացութեան կը ձգտէին հետեւաբար բացայայտ ճշմարտութիւն մըն է որ այդ բոլորին եղեռնական գործերը մաս կը կազմէին այս անիծապարտ նպատակը իրագործելու ձգտող պայմաններուն : Բացայայտ է նաեւ որ այս ամբաստանեալները, տեղ տեղ և զանազան կողմեր եղեռններ գործելու համար պոմպաներ ու տինամիթներ փոխադրած և պահած էին, որպէս զի զանոնք պայթեցնելով տուններ քանդեն, և քաղաքներ անձերու սպանման պատճառ ըլլան : Աւրեմն ատոնք այս կարգի եղեռնական եպիսկոպոսականներ հետապնդող վատ անիշխանականներ են : Ամբողջ աշխարհ զգուանքով կը յիշէ և անէ՛ք կը կարդայ այսօրինակ եղեռնագործներու, որոնք մարդկային ազգին վնասելու վայրագութիւնը ունենալով պատճառ կը ըլլան բազմաթիւ անձերու սպանման, այնքան ընտանիքներու անպատասպար և անապրուստ թշուառ վիճակի մը ենթարկուելուն :

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Անցեալ կիւրաքի տեղոյս Ազգ. վարժ. Հոգաբարձութեան նախապէս ցուած յայտարարութեան համաձայն եկեղեցւոյ բակին մէջ տեղի ունեցաւ նախագահ Ռուզվէլթի ըլլալիք դիմումին համար կազմուած միթիկը : Երկուստ խառն բազմութիւն մը ամբողջ բակը զրաւած էր, մօտ 400 հոգի : Երկար ատենախօսութիւններ եղան զիմումին անհրաժեշտութիւնը կամ կարեւորութիւնը պարզող Ատենախօսներէն մին շեշտեց, սակայն, թէ այդ կարգի դիմումները ալ մէկ օգուտ ձեռք չեն բերեր, ինչպէս որ չեն ալ բերած մինչեւ այսօր, և թէ ատանց ինքզինքնա խաբելու, մեր ջանքը ըլլալու է տնտեսապէս զարգացնել զայն ու զօրացնել անոր մէջ կոռուող ուժը և ինքնապաշտպանութեան ոգին : Միթիկը որոշեց վերջապէս փոխանակ հետադրի, ինչպէս որ ըրած էին ուրիշ տեղեր, պարզապէս հանրագրութիւն մը զրկել նախագահ Ռուզվէլթի մօտաորակէս

գործերուն խառնուող մէկն էր և անյազ տենջ մը ունէր իրերու տիրող կարգերը փոփոխելու : Իր մասնակցութիւնը երբեմն կը վերջանար լաւով, իսկ յաճախ՝ ահաւելի չարիքով : Ծարբերու պատմութիւնը՝ Պետրո. ունէ մինչեւ Նիքոլա՝ մարդկային պատմութեան է՛ն զարմանալի է՛ն է : Պիտի տեղեկք թէ ի՛նչպէս լուսնոտներ ու լկախներ, ապուշներ ու ահարկու սրբկաներ, կը կառավարէին Ռուսիան ու իր միլիոններուն ճակատագրը իրենց ազատ ձեռաց մէջ կը պահէին :

Պետրոս ատոջինն էր. կատարինէ.— լպիրը, զինով ու անասնաբարոյ,— երկրորդը. ապա վտիտ ուղեւման մէկը՝ որ մեռաւ ծաղկախաւէ. ապա Աննա, որ կը հալածէր անողբաբար. այնուհետեւ Եղիսաբէթ, այդ թեթեւաբարոյ կիներ, հուսկ ուրեմն սպուշ Պետրոսը և կատարինէ՛ Մեծը, կին

մը՝ որ հարիւր սիրահար ունէր. ու Պետրոս և Ալէքսանդրա ու Նիքոլա. և այսպէս ներկայ Յարը : Ասկէ զարմանալի պատմութիւն մը երեւակայելի չէ : Մարդ կարող է ըսել այդ, գիտնալով որ հարկ չկայ բարոյական մը ցոյց տալու, որովհետեւ ցարբերու պատմութիւնը. պայծօրէն խօսելով՝ առանց սեթեւեթանքի. ներկայ յեղափոխութեան պատմութիւնն է :

Պետրոս զաւակն էր Ալէքսիսի կընոյ : Կենթադրուի թէ Ալէքսիսի որդին էր. Շատ հաւանական չէ որ այդպէս էր, բայց նկատի ունենալով ժամանակի բարոյական կշիռքի արտօնանքի. թեթեւութիւնը. մեծ կարեւորութիւն չը տրուի : Այնուհետեւ պատահած ամօթաբեր զէպքերն են Արքունիքին մէջ. որոնք զրին Պետրոսի հարազատութեանը բանաւէ՛ծի արժանիքէն զուրս :

Երբ Ալէքսիս մեռաւ, զաւակներ թողուց երկու կիներէ, և իւրաքանչիւր կնոջ կողմը հաւաքուեցան հատուածներ՝ պատրաստ աւարի յօժար կեանքներին շահագիտելու զօրաւոր կողմին :

Յիւստօրի մահուընէն վերջ,— երբ ցաղոյն որդին — շատ արիւնհեղութիւն, բազում միջնազիշերային սպանութիւններ, կատարի. բացէն կոռուներ, և մեծաքանակ խողխողում, զրին Ռուսիան՝ Պետրոսի, իր եղբոր իվանի և քիոլ Սօֆիաի երրորդութեան ներքեւ : Գահին վրայ կը բազմէր երկու հոգի.— Պետրոս, վարվաուն, արթուն մէկը, նեղ աչքերով գլուխը կողբէն ցոյն. հսկող. անհարգարտ, նպատակաւոր. մօտը իվան, կիսախեւկիսակոյր, թոյլ. գիտովութեան և ընդհանուր զազանութեան հակուսնութիւնը :

(Շարունակելի)

ուրիշ տեղերէ զրկուած հեռագիրներուն բովանդակութեամբ : Վառնա-
ցիներու այս որոշումը գուցէ աւելի
կը յուզէ Ռուզէլիքը, քան զրկուած
հեռագիրները : որովհետեւ
տեսակ մը արհամարհանք է նետուած
ցուրտ դիւանագէտներու երեսին
յայտնելու համար թէ, իրենք շատ
մեծ վստահութիւն չունին անոնց
մարդասիրական զգացումներու վրայ :

— Սիրիստրէէն կը գրեն մեզ :
«Այս տարի, ըստ սովորականին,
Վարդանանց տունին առթիւ, դպրո-
ցական կողմի շանդէս մը ունեցանք ;
Հոգեհանգիստէն ետքը պատարագիչ
հայրը, մեր սիրեցեալ հովիւ Տէր Սար-
գիս Գէնյ, Ղարիպեան, երգերով ա-
ռաջնորդուեցաւ վարժարանին սրահը
ուր արդէն խոնուած էր երկսեռ ազ-
գայիներու բազմութիւնը :

«Աշակերտներու եւ աշակերտու-
հիներու կողմէ սովորական արտասա-
նութիւններ եղան, երգեր երգուե-
ցան կարգապահութեամբ ու ներ-
դաշնակօրէն : Ամենէն վերջը Տէր
Սարգիս հայրը բեմ ելլելով օրուան
տունին վրայ հակիրճ պատմական սե-
ղեկութիւններ տալէ ետքը, ի դիմաց
քաղաքիս պատ. Թաղ. խորհրդոյ, հը-
րաւիքոց ժողովուրդը « ր, այդ նշա-
նաւոր օրուան մէջ նկատի առնէ նաեւ
ազգին ներկայ ճգնաժամը : Ու կոչը-
րաւ որ, առիթէն օգտուելով, հեռա-
գիր մը ուղղուի նախագահ Ռուզ-
զէլի իր մեզ ցոյց տուած համակ-
րութեան համար :

«Այս սրտամօտիկ կոչը իսկոյն ար-
ձագանգ գտաւ ներկաներուն մէջ եւ
խմբագրուեցաւ հեռագիր մը, խնդրե-
լով նոր աշխարհի մարդասէր նախա-
գահէն որ չի զլանայ խոշուած Հա-
յաստանի եւ նահատակ հայ ազգին
արգար դատին համար իր թանկագին
պաշտպանութիւնը :

«Փափաքելի էր որ, կաւելցնէ նա-
մակագիրը, մեր օրինակին հետեւէին
նսեւ Ռուսմանիոյ եւ Աւստրիոյ պատ-
հայ դադու թիւերը :

— Անցեալ ուրաթ գիշեր արժա-
նաւոր վայելչութեամբ տեղի ունեցաւ
տեղւոյս Ազգ. Պարահանդէսը : Բոլոր
հայ ներկայանալի դասակարգը մաս-
նակցած էր այդ գիշեր : Արդիւնքը
մօտ 3000 ֆր. եղած է, ինչ որ եղա-
կան է սինչեւ այսօր եղածներուն
մէջ, Համոզուինք որ գիտակից Գան-
քերը միշտ յաջողութեամբ կը պսակ-
ուին :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Աժանս Հաւասար Պօլսոյ թըզ-
թակիցը, Ժիւլ Սանտուր, երկրիս
իշխանութիւնը ձերբակալած է :

Կառավարական գաղտնահիւս
հեռագիրներու պատճէնը ձեռք
ձգելու համար, նա ուզած է կա-
շառել հեռագրատան պաշտօնեայ
Թօտօօփը : Հարցաքննութեան
դատարար արդէն իր տեղեկա-
գիրը ընդհանուր գատախազին
զրկած է : Կը կարծուի թէ քիչ
օրէն գատաղարութիւնը կը սկսի :

— Ամօռոյ 6 ին, երկրիս իշխա-
նութեան, Սօֆիայի թուրք կա-
ռավարութեան ներկայացուցիչ,
Սատրք բաշայի ուղղած ծանու-
ցագրին մէջ յիշատակուած է թէ՛
ասկէ 4 ամիս առաջ՝ արդէն

պուլկարական կառավարութիւնը
առաջարկած է թուրք եւ պուլկար
մաքսային համաձայնութեան վե-
րաքննումը, խառն յանձնաժողո-
վի մը միջոցաւ : Հիմայ Պուլկա-
րիան շատ գոհ է որ Բ. Գուրը
վաճառականական յարաբերու-
թիւններու պահպանումը կուզէ
ու կը շեշտէ նաեւ, սերպու պուլ-
կար մաքսային համաձայնութեան
թրքական շահերու չը վնասելը,
քանի որ պուլկարական ապրանք-
ներու համար վկայաթղթեր կը
տրուին :

Այս հարցը քննելու համար
յանձնաժողովոյ անդամները Պօ-
լիս պիտի ժողուին :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

«Իվինիւկ Սթանտարտ» լրա-
գիրը կը հաւաստէ թէ՛ Եէմէն
զօրք փոխադրող շոգեմուտներու
մէջ ապստամբութիւն ծագած է :
Չօրքերը՝ իրենց յետամնաց ամ-
սականներու վճարումը կը պա-
հանջեն :

— Պօլսէն «Էքօ աը Բարի» ԼԵ-
րագրին կիմացնեն. Տաճկական
զինուորները Օանաէն դէպի
Թաիֆ քաջուած են, արապներու
հետապնդումին ենթակայ Տեղա-
տարափի անձրեւները Մէքքէի եւ
Պուպպի միջեւ եղած տարածու-
թիւնը ողողած են :

Վերջին լուրերու համաձայն,
թրքերուն կորուստը Եւհարայի
մօտ շատ մեծ է : Ամրանը շըր-
ջապատուած է. ճէպէլտորամը եւ
Մապէրը արապները առած են,
ու իրենց զինուորական կեդրո-
նատեղին Գոմիսի մէջ հաստա-
ած են :

Թաիֆի շրջակայքը պտե-
րազմը կը շարունակուի :

— Պօլսէն կիմացնեն թէ՛ հա-
յու մը տան մէջ, ոստիկանու-
թիւնը գտած է աւուրեր եւ Սուլ-
թանի կեանքի գէժ գործադրելի
նոր մահափորձի մը յատակա-
գիծը :

— Անգլիական կառավարու-
թեան ըրած դիմումի վրայ,
թուրք կառավարութիւնը Ահա-
պէն քաջած է իր զօրքերը, ու
ասով թրքա եգիպտական վէճը
վերջացած կը համարուի :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Բէթէրպուրկէն հասնող լու-
րերու համաձայն, նախարարա-
կան տաճնապը հետզհետէ լուրջ
կերպարանք կառնէ. անթիւ
պաշտօնական անձինք կը հաւաս-
տեն թէ՛ Վիթթէն քիչ օրէն իյ-
նալու է :

Ներքին գործոց նախարար
Տուրքուսի ազգեցութիւնը հետզ-

հետէ կը զօրեղանայ, իսկ ճրն
շումի քաղաքականութիւնը աւե-
լի բացայայտօրէն կը շեշտուի :

— «Նշանժ թէլէկրաֆոր կի-
մացնէ թէ՛ ուսակ ն կառավա-
րութիւնը՝ Ֆրանսական դրա-
մատէրներու սինտիգայի մը հետ
բանակցութեան մտած է՝ 6 առ
հարիւր տոկոսով եւ 92 ֆրանք
շրջաբերազինով 450 միլիօն
րուպլի փոխառութիւն մը կնքե-
լու համար :

— Պալգիկեան նահանգի եր-
կաթուղիներու վերատեսուչ իվա-
նովը, փողոցի մէջ վեցհարւած-
եանով սպաննուած է, սպաննող
պատէ :

— 53 յեղափոխականներու ըս-
պանման մասին, հետեւեալ սարս-
ռապգեցիկ մտնրամասնութիւն-
ները կիմացնեն Բիկա քաղաքէն.
«Փոս մը պատրաստեր են իրր
գերեզման ամենուր համար, ա-
ռաջին անգամ՝ դատապարտ-
ուածներէն 12 հոգի կը շարեն
անոր եղբրքը, ու միահար հրա-
ցանաճողութեամբ զանոնք դե-
րեզմանին մէջ կը թաւալեն : ա-
սի երեք անգամ կը կրկնուի.
ամէնէն վերջը 5 հոգի կը մնայ,
որոնց համար ականին քով տեղ
չի մնար, ասոնք կը ստիպուին
ժայրէ ի ծայր այս բարբարոսու-
թեան ականատես ըլլալ : Վեր-
ջապէս անոնց ալ կարգը կուգայ,
կը շարեն ընդհանուր գերեզմա-
նին առջեւ, և քանի մը հար-
ւածով կը թաւալեն անոր մէջ :
Այս գաղանթիւնը աւելի վայ
րենիք է՝ որովհետեւ զինուորնե-
րը կիսամահ եղածներն ալ մե-
ռածներու հետ թաղած են հո-
գին տակ :

— Նախարարական խորհրդի
վերջին նիստին մէջ Վիթթէի եւ
Տուրքուսի միջեւ նոր անհամա-
ձայնութիւններ ծագած են, Վի-
թէն պահանջած է նահանգա-
պետներու կամայականութեանց
առաջը առնել : Տուրքուսին՝ Վի-
թէին խոստացած է քանի մը զի-
ջողութիւններ ընել, և համա-
ձայնած է սառնց Վիթթէի հա-
ւանութեան ու է բան չը տնօ-
րինել :

— Բէթէրպուրկէն կիմացնեն
թէ՛ քաղաքապետութեան բացած
քննութենէն կը տեսնուի թէ՛
քաղաքին մէջ ամիսներէ իվեր
32700 անգործ գործաւորներ
կան՝ որոնք անթողութենէ կը
մեռնին :

Այլ և այլ շինութիւններ պիտի
սկսուին այս խեղճեւուն գործ մը
ճարելու համար :

— Հրէական ընկերութիւնները
դիմում ըրած են անգլիական
կառավարութեան՝ որ հաւանի
ընդունիլու ուր—հիւայ գաղթա-
կանները իր երկրին մէջ, կա-
ռավարութիւնը ընդունած է այս
խնդրանքը :

Մարտին սկիզբը գաղթակա-
նութիւնը սկսելու է :

— «Րուս» լրագրին մէջ՝ Յու-
շիմայի մօտ եղած ծովամարտի
նկարագրութիւնը կընէ ծովակալ
Նէպոկազովը, որով նա ինքզինքը
կտրագարայնէ, և կը յայտարարէ
թէ ինքը անձնատուր եղած է
ուս մարտանաւերու թնդանօթ
ներու անկտարելիութեան և
ճարնական մարտանաւերու ա-
րագսշարժութեան պատճառաւ :
Բոճէսզվէնքին և էսէնը կամ-
բաստանէ՝ և կը պահանջէ որ
զանոնք ծովային դատարանի
յանձնեն : Անորէվեան դրոշի
պատիւը, կընէ նէպոկազովի ար-
քունկաններու շահին համար
այսքան զոհ տալ՝ անոր չէր թոյ-
լատրեր. այն արքունկանները
էին որ մարտելու համար հին
հին շոգեմուտ ուղարկեցին, ի-
րենց բարոյական սնանկութիւնը
սքողելու պատրուակով :

— Գուպանի մօտերը, Չամինսքի
մէջ, 600 քողապներ ապստամ-
բած են : Չանոնք խաղաղացնելու
համար 5 խորտընկէցով միասին
զօրք զրկուած է : Արգէն ընդ-
հարում մը տեղի ունեցած է,
մանրամասնութիւն կը պակսի :

— Բէթէրպուրկեան լրագիր-
ներու մէջ, ուս գործաւորական
կուսակցութեան անդամներէն
մէկ հետեւեալ յայտարարութիւ-
նը կընէ :

«Գործաւորներու կազմակեր-
պութեան համար, Վիթթէն, Կու-
րանին 30000 րուպլի տուած է :
Ասի կուսակցութեան միայն 3
անդամները գիտեն եղբր : Այս
գումարէն, կուսակերպական
նպատակով, Կարոնը, անգամ
մը 1000 րուպլի տուած է, յետոյ
իր փոխանորդի՝ Մատուշէնքսի
միջոցաւ, երկու անգամ եւս
1000 սկան րուպլի տուած է :
Իսկ մնացած 27000 րուպլին ի-
րեն համար վատնած է :

Ն Ո Ր Գ Ր Ք Ե Ր

Լոյս տեսաւ Ի Լօնտօն «ՊԱՏԱՆԻ»
ամսագրի յոսարանէն :

ՊԱՏԱՆԻԻԻՆ ԱՐԵՆԵԼԵՍԻՆ ԽՆԴ-
ՐՈՅ ԵՒ ՍՈՒՋՆՈՐԴ ՀԱՅԿԱՎԱՆ
ՀԱՐՑԻ. Հեղինակութիւն Բրօք. Թու-
մայանի, Նիւթին շահկանութիւնը
եւ հեղինակին հմտութիւնը եւ ոճը
մեծ արժէք կուտան այս 670 էջերէ
բաղկացեալ և երկու հատորի բաժ-
նուած գրքին : Գինը Պուլկարիոյ հա-
մար 4.40 ֆր. փոստով 4.80 ֆր. :

ԳրՊԱՆԻ ԵՐԿԱՐԱՆ, կը պարու-
նակէ 400 հատ ընտրեալ ազգային
երգեր, Գինը Պուլկարիոյ համար 1.
բոստով 1.10 :

Փափաքողները կրնան դիմել հե-
տեւեալ Հասցէին

Représantante de la Revue «Badani» chez
M-r Avedis Melidonian — Varna
Bulgarie

Վճարումները պէտք է կանխիկ ըլլան :

Печатница на П. Глужковъ С-неBadn